# ԿԱՐԾԻՔ

## ՍԻՐԱՆՈՒՇ ՀՈՎԻԿԻ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆԻ «ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԻՐԶԱՅԱՆ ՎԱՆԱՆԴԵՑՈՒ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ» ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ամեն մի ուսումնասիրություն նոր քայլ է գրողին գնահատելու ճանապարհին: Գիտության տարբեր ճյուղերի ուսումնասիրության առարկա է դառնում այն, ինչ մարդկությունը ստեղծում է իր զարգացման ընթացքում: Ամեն մի ժողովուրդ գալիս է իր անցյալից, իսկ հետադարձ հայացքն անհրաժեշտ է ոչ միայն անցյալի ստեղծածը գնահատելու, այլև այդ արժեքներից օգտվելու համար: Հայ գրականության բազմաթիվ ստեղծագործություններ գրվել են ազգային գիտակցության բարձրացման, ինքնաճանաչողության, միասնականության արժեհամակարգի ձևավորման անհրաժեշտությամբ: Մինչդեռ հայագիտությունն իր ոչ բոլոր երախտավորներին է դեռևս ըստ արժանվույն գնահատել:

Հովհաննես Վանանդեցու ստեղծագործությունը թեև ուսումնասիրողները արժևորել են առանձին անդրադարձների ու գիտաքննական վերլուծությունների, հոդվածների ու գրախոսությունների միջոցով, այդուհանդերձ մինչ օրս նրա գրական ժառանգությունը համապարփակ ուսումնասիրության չի արժանացել:

Սիրանուշ Փարսադանյանի «Հովհաննես Միրզայան Վանանդեցու գրական ժառանգությունը» թեկնածուական ատենախոսությունը միտված է լրացնելու մի շատ կարևոր բաց՝ մեկտեղելու հեղինակի ստեղծագործության շուրջ առկա ողջ տեսական, քննադատական միտքը, խորքային քննությամբ վեր հանելու նրա գրական ժառանգության ցարդ անհայտ իրողությունները, գնահատելու Հովհաննես Վանանդեցի մշակութային գործչին, բանաստեղծին, հայկական կլասիցիզմի նշանավոր ներկայացուցչին: Այլ խոսքով ասած՝ ատենախոսության թեման արդիական է և քննում է կարևոր հարցադրումներ:

Ատենախոսության Ներածությունը հանգամանալից մի ուսումնասիրություն է, որտեղ կենսագրական ու ստեղծագործական զուգահեռումներով ատենախոսը բացահայտում է Հովհաննես Վանանդեցու գաղափարական ընդհանրությունները Մխիթարյան-

ների հետ, անդրադառնում հեղինակի ստեղծագործական գործունեության համար հատկանշական՝ ձեռագրերի ընդօրինակման ձիրքին, աստվածաբանական ու հայագիտական գործունեությանը: Մյուս կողմից՝ ատենախոսն այստեղ հիմնավորում է կլասիցիզմի գերակշռությունը հեղինակի երկերի համապատկերում, ճշտում Վանանդեցու ստեղծագործության տեղն ու դերը՝ «Նրա ստեղծագործությունները հին և նոր գրականության սահմանագծին են» (էջ 12): «Հայրենասիրությունն ու ազգասիրությունն են,– գրում է նա,– նրա գլխավոր ստեղծագործությունների կենտրոնական գաղափարաբանության հիմքը...» (էջ 9):

Ատենախոսության առաջին՝ «Հայոց դարձի գեղարվեստական մարմնավորումը («Արփիական Հայաստանի»)» գլխում ատենախոսը մեծածավալ աշխատանք է կատարել՝ Հովհաննես Վանանդեցու ստեղծագործության և վերջինիս համար հիմք դարձած սկզբնաղբյուրների համապատասխան հատվածների մանրակրկիտ ուսումնասիրման տեսանկյունից: Այսպիսի համադիր քննության արդյունքում է, որ բացահայտվում է Վանանդեցու թե՛ գեղարվեստական մտածողության, թե՛ բնագրային ընկալման առանձնահատկությունները: Դրանցից ուշարժանը Վանանդեցու՝ սկզբնաղբյուրների հետ աշխատանքը բնագրային վերաշարադրանքի տեսանկյունից դիտարկելն է՝ «Տասնիններորդ դարի առաջին տասնամյակներին գեղարվեստական երկի համար պատմիչներին մեջբերելը և նրանց բառապաշարը օգտագործելը,– պարզաբանում է ատենախոսը,– դիտվում է որպես ստեղծագործական հմտություն և ավանդների շարունակում» (էջ 51):

Հատկանշական է ատենախոսի այն դիտարկումը, որ Հովհաննես Վանանդեցին իր ստեղծագործության մեջ առանձնահատուկ նշանակություն է տալիս մարդու ներաշխարհի բացահայտմանը՝ «... Վանանդեցու համար՝ որպես նոր շրջանի հեղինակի, կարևորվում է հոգեբանական դրաման, հերոսական և ուժեղ անհատների կերպարների ստեղծումը, և այդ ամենը գեղարվեստական հուզականությամբ նեկայացնելը» (էջ 44): Անհատական քնարերգությունը հայ գրականության մեջ սկզբնավորվել է Գրիգոր Նարեկացու երկերով, այնուհետև իր ճյուղավորումները գտել հետագա հեղինակների, նաև՝ Հովհաննես Վանանդեցու ստեղծագործություններում:

Սիրանուշ Փարսադանյանը նշանավորում է Վանանդեցու երկերը նաև գեղարվեստական արժանիքների տեսանկյունից: Ատենախոսն աշխատանքի տարբեր հատ-

վածներում քանիցս անդրադառնում է նորաբանությունների գործածությանը, բնագրային բառերի՝ դրանց առավել ազդեցիկ տարբերակներով փոխարինմանը, նոր բառերի հավելմանը, գործածությունից դուրս եկած բառերի կիրառությանը՝ իրավացիորեն շեշտելով մի շատ կարևոր հանգամանք՝ «Այս բառերի գործածությունները բնավ էլ ինքնանպատակ չեն, այլ ծառայում են միայն պատկերների առավել ցայտուն ու տպավորիչ լինելուն» (էջ 57):

Նույն համակողմանիությունը բնորոշ է նաև ատենախոսության երկրորդ՝ «Հայկական կլասիցիզմի պատմահայեցողության բանաստեղծական արտահայտությունը» գլխին և «Տեսարան հանդիսացն Հայկայ, Արամայ և Արայի», «Ոսկի դար Հայաստանի» ենթագլուխներին: Այստեղ էլ Փարսադանյանը խորքային քննությամբ, ծանրակշիռ օրինակներով ցույց է տալիս կլասիցիզմին բնորոշ դրսևորումները Հովհաննես Վանանդեցու ստեղծագործության մեջ:

Աշխատանքի արժանիքներից է նաև այն, որ ատենախոսը տարբեր մեթոդների կիրառմամբ քննաբանում է ոչ միայն Վանանդեցու ստեղծագործության և վերջինիս համար հիմք հանդիսացող սկզբնաղբյուրների առնչությունները, այլև տարբեր սկզբնաղբյուրների համեմատությամբ վեր է հանում դրանց նմանություններն ու տարբերությունները: Այդպիսի հմտալից մի անդրադարձ է ատենախոսության մեջ Ագաթանգեղոսի և Խորենացու՝ փաստերը նկարագրելու վարպետությանը նվիրված համեմատական քննությունը, որի արդյունքում բացահայտվում է Վանանդեցու՝ «պատմական չոր ու ցամաք փաստերը գեղարվեստականորեն ներկայացնելու ձիրքի մասին» (էջ 70):

Ուշագրավ է ատենախոսության երրորդ գլուխը՝ «Հոգևոր-կրոնական գործերը («Ճառ ներբողական ի սուրբ խաչն Քրիստոսի և պատմագրական առասացութիւն ի Սուրբ Նշանն Վարագայ», «Կերակուր քահանայից»)»: Այս երկերում է, որ Վանանդեցին հաճախ դիմում է սուրբգրային հարասություններին, աստվածաշնչյան իրողություններն անմիջականորեն մասնակցում են նրա ստեղծագործությունների դրվագների, կերպարների ստեղծմանը, մտքերի հաստատմանը: Այսպիսի զուգահեռ օրինակների վերհանմամբ էլ ատենախոսը գնահատում է Հովհաննես Վանանդեցու կրոնական բնույթի երկերը՝ որպես հայ հոգևոր մտքի վերարժևորման կարևոր նախադրյալ:

Ամփոփելով ասենք, որ Սիրանուշ Փարսադանյանը մեծածավալ աշխատանք է կատարել: Ատենախոսությունն աչքի է ընկնում սկզբնաղբյուրներից օգտվելու հմտություններով, խորքային վերլուծություններով, մեթոդաբանական դրույթներով, բազմաբովանդակ գրականության ցանկով՝ համալրված Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրական հարուստ նյութով, տրամաբանված եզրակացություններով:

Ելնելով վերոնշյալից, Սիրանուշ Հովիկի Փարսադանյանի՝ «Հովհաննես Միրզայան Վանանդեցու գրական ժառանգությունը» ատենախոսությունը սիրով երաշխավորում ենք պաշտպանության: Ուսումնասիրությունը համապատասխանում է ատենախոսության համար ներկայացված պահանջներին, իսկ ատենախոսը լիովին արժանի է իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝ **Անուշ Ապրեսյան**

Բանասիրական գիտությունների թեկնածու,
Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
ավագ գիտաշխատող

Հաստատում եմ բ. գ. թ. Ա. Ապրեսյանի ստորագրությունը:
Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտնական քարտուղար պ. գ. թ. Վ. Թորոսյան

10 դեկտեմբերի, 2022թ.